



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

50

8

P-34

8

82

F-34

ԲԱՆՏԱՐԿԵԼՈՅ ԶԱՐԱԳՈՅՆԸ

ԿԱՄ

27

ՅԱՆՑԱՆՔԸ ՃԱՆՉԵԱԼ



معارف عمومیہ نظارت جلیلہ سنک رخصتیلہ طبع اونٹمشدر
Հրամանաւ ժողովոյ պաշտօնէից Հասարակաց կրթութեան

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1884

2011

2003

8

F-34

ԲԱՆՏԱՐԿԵԼՈՅ ԶԱՐՍԳՈՅՆԸ

ԿԱՄ


ՅԱՆՑԱՆՔԸ ՃԱՆՉՆԱԼ

Գաղիոյ Լուսավորիկոս Ժ.Դ.ի թագաւորութեան առաջին տարիները, Գերմանացի իշխանազուն մը՝ մինչ կը ճամբորդէր սոյն երկրին մէջ, եկաւ թուրոն եւ օր մը այց ելաւ արքունի նաւարանին, ուր բանտարկեալ էին ոճրագործք որ դատաւարտեալ էին շղթայակապ աշխատութեան:

Նաւարանին տեսուչն ի պատիւ իշխանազուն անձին առաջարկեց անոր ընտրել բանտարկելոց մին, զորն կ'ուզէր, որպէս զի արձակուէր բանտէն:

Իշխանը շնորհակալութեամբ ընդունեց առաջարկութիւնը եւ իմաստուն ընտրութիւն մը ընելու համար, սկսաւ հարցունել բանտարկելոց իւրաքանչիւրին թէ ի՞նչ յանցանքի համար դատաւարտուած էր: Իւրաքանչիւր կ'արդարացունէր զինք. մին այլոց թշնամութեանը կ'ընծայէր իւր դատաւարտութիւնը, միւսը՝ զրպարտութեան, ոմանք եւս դատաւորներէն կը դանդատէին որպէս թէ յանիրաւի դատաւարտեցան: Ասոնց խօսքին նայելով, իշխանը զրկանք կրած էին:

Մին միայն երբ հարցուեցաւ, «Վսեմաշուք տէր»



43262 - ւս
28593-62 P

ըսաւ, «չունիմ տեղի գանգատելու, ես այնպէս մեծ չարագործ եմ, որ այս խիստ պատիժն անգամ մեծ շնորհք կը համարիմ ինձ, ես մահու խակ արժանի եմ:»

Իշխանը նայելով անոր երեսը՝ ըսաւ հեգնութեամբ «Քեզի պէս չարագործի մը չէր արժան այս անմեղ մարդոց մէջ կենալ, քու խոստովանութենէդ անգամ յայտնի է. կրնաս այս մարդոց բարքն ապականել, ուստի պէտք չէ որ մնաս հոս, անոնցմէ պիտի դատեմ գքեզ:»

Յետոյ դառնալով տեսչին ըսաւ անոր ցած ճայնիւ բայց վճռաբար. «Ահա այս մարդը կ'ընտրեմ որ ազատ թողուի:»

Իշխանին այս որոշումը անտարակոյս խնաստութեամբ էր: Մարդ մը որ կը ճանչնայ եւ կը խոստովանի իւր յանցանքը եւ արդար կը համարի իւր պատիժը, աւելի արժանի է թողութեան քան յանցաւոր մը որ չճանչնար եւ չխոստովանիր յանցանքը: Յանցանքը ճանչցող եւ խոստովանողին համար շատ յոյս կայ թէ իրեն տրուած շնորհաց արժանի վարք ցուցնէ յետոյ:

Յանցանքը զգալն է առաջին քայլ թողութիւն գտնելու: Ով որ կը խոստովանի իւր յանցանքը եւ կ'զգայ թէ արժանի է պատժոյ, նշան կու տայ ուղղութեան: Եւ ընդհանրապէս, որչափ զորաւոր է այնպիսւոյն զգացումը, այնչափ աւելի յոյս կայ անոր դարձին:

«Ես շատ չար եւ մեծ մեղաւոր եմ, յոյս չունիմ թողութեան,» գոչեց այսպիսի զգացում ունեցող մը որ կը կարծէր թէ իրեն համար չէր Աւետարանին խոստումը:

«Ի՛նչ, բարեկամ, շատ չար եւ մեծ մեղաւոր ես, ուրախ եմ լսել բերնէդ այս խօսքը», ըսաւ անոր ուրիշ մը: Մարդը զարմանալով այս պատասխանին վրայ՝ հարցուց,

«Ի՛նչ, ուրախ ես որ չար եւ մեծ մեղաւոր եմ, եւ յոյս չունիմ թողութեան:»

«Ոչ այնպէս, սիրելի,» ըսաւ միւսը, «ոչ թէ մեծ մեղաւոր ըլլալդ, այլ մեղքերդ զգալով խոստովանելը թէ չար ես, կ'ուրախացնէ զիս:»

«Բարի,» ըսաւ միւսը, «բայց չեմ հասկնար թէ ինչպէս կրնաս ուրախանալ լսելուդ համար իմ բերնէս թէ յետին աստիճան չար եմ: Եթէ ես այնչափ յառաջացած չըլլայի չարութեան մէջ, կրնայի քիչ մը յոյս ունենալ, բայց հիմա յոյս չկայ ինձ համար:»

«Յիսուս Գրիստոս,» ըսաւ միւսը, «եկաւ փրկել զմեղաւորս. նա կը կոչէ ոչ զարդարս այլ զմեղաւորս յապաշխարութիւն:»

«Բարէ՛, այդ ինձի համար չէ, ինձի համար որ մեծ, մեծ մեղաւոր եմ,» կրկնեց միւսը:

«Առողջներուն բժիշկ պէտք չէ, այլ հիւանդաց» ըսաւ ընկերը: Ի՛նչ կը կարծես, Գրիստոս Տէրն մեր այն մեծ Բժիշկը, հասարակ ախտերը եւ հոգւոյն թեթեւ հիւանդութիւնները միայն կրնայ բժշկել: Քաւ լիցի, նա կարող է բուժել հոգւոյն անյոյս ցաւերը: Մեծ մեղաւորը կարօտ են մեծ ֆրկչի, եւ ո՞չ ապաքէն Գրիստոս կարող է փրկել ամէնքը որ կու գան առ նա:»

«Այո՛,» ըսաւ մարդը, «գիտեմ եւ կը հաւատամ թէ Գրիստոս կարող փրկիչ է, չեմ յուսար սակայն

թէ փրկէ զիս: Եթէ գիտնաս թէ որպիսի կեանք վարած եմ, դու եւս չես յուսար թէ փրկէ զիս:»

«Բայց ի՞նչ,» ըսաւ դարձեալ միւսը, «կը կարծես թէ Քրիստոս չկամիր. կը կարծես թէ չէ այնչափ կամեցող որչափ կարող է: Ի՞նչ էր Անոր աշխարհ գալուն նպատակը: Այս խօսքը հաւատարիմ է եւ բոլորովին ընդունելութեան արժանի, որ Քրիստոս Յիսուս աշխարհ եկաւ մեղաւորները փրկելու: Եւ փրկին ինք կ'ըսէ, 'Այն որ կու գայ առ իս, բնաւ դուրս պիտի չհանեմ': Մի՛ ըսեր, 'Ես այնպիսի մեծ մեղաւոր եմ, որ չեմ կրնար փրկուիլ': Աստուծոյ շնորհքը կարող է փրկել մեծագոյն մեղաւորն անգամ: Բուն իսկ այդ, այսինքն մեղացը ճանաչումը, նշան է թէ յոյս կայ քեզի համար: 'Առողջներուն բժիշկ պէտք չէ, այլ հիւանդներուն': Զգուշացիր որ անհաւատութեամբդ չքիզես «մեղս ի վերայ մեղաց:»

Մարդն առ ժամայն համոզուեցաւ, քաջալերուեցաւ եւ լցաւ յուսով: Երանի թէ այսպիսի դէպք այսինքն ճանաչումն մեղաց ի խորոց սրտի ի ձեռն Հոգւոյն Սրբոյ, աւելի յաճախ ըլլային քան որչափ եղած են ցարդ: Զգոյշ լեր ըսելու «Սաղաղութիւն, խաղաղութիւն,» մինչդեռ չկայ խաղաղութիւն: Մեղաց դառնութիւնը զգացող Հոգւոյն համար, Աւետարանն աղբիւր է յուսոյ եւ ուրախութեան, բայց տպաւորութիւնը զոր կ'ընէ Աւետարանն անոնց սրտին վրայ որ չեն խոնարհած մեղաց ճնշման տակ եւ անապաշաւ են՝ շատ չնչին է, իբրեւ ստուեր կ'անհետանայ: «Անիկա մարդոց վրայ կը նայի. եւ թէ որ մէկը ըսէ, Մեղք գոր-

ծեցի եւ իրաւունքը աւրեցի, եւ ասիկա ինծի օգտակար չեղաւ, Ան ատենը անոր հոգին կ'ազատոր գերեզմանը չիջնէ, եւ անոր կեանքը կը լըյսը:» «Իւր յանցանքները ծածկողը յանցանքները չգտնէ:» Քիչերը չափազանց ծակին արդար հասնել զիրենք. մարդիկ ընդհանրապէս կը խոստովանին թէ մեղաւոր են, բայց այս խոստովանութիւնը չէ ի սրտէ, այլ սովորական խօսք. իւր յատուկ մեղքերը ճանչնալու եւ զգալու գաղափարը գրեթէ չկայ, ուստի եւ մեղաց թողութիւն գտնելու հոգ եւ անձկութիւն հազիւ կը տեսնուի մարդոց մեծագոյն մասին վրայ: Բայց եթէ անգամ մը սթափին եւ թողուն այս ցաւալի անտարբերութիւնը, եւ սկսին քննել Աստուծոյ սուրբ եւ արդար օրէնքը, եւ անոր հետ բաղդատել իրենց հանապազօրեայ վարմունքը՝ պարտականութեանց մէջ զորս ունին առ Աստուած եւ առ ընկերն, պիտի զգան թէ ինչ աստիճան մեծ մեղաւորներ են եւ մեծապէս կարօտ թողութեան: Երբ կ'ընեն զայս, այն ատեն, եւ այն ատեն միայն պիտի սկսին՝ մաքսաւորին պէս աղերսել թախանձանօք, «Աստուած, ողորմէ ինձ մեղաւորիս,» եւ մաքսաւորին պէս պիտի գտնեն ողորմութիւնը զոր կը խնդրեն:

24

ԱԲ.


50

ՅԱՆԿ ԳՐՈՑ ԵՒ ՏԵՏՐԱԿԱՑ

ՈՐ ԿԸ ԾԱԽՈՒԻՆ

ՊՈԼԻՍ ԱՄԵՐԻԳԱՆ ԳՐԱՏՈՒՆԸ

	ԵՐԵՎԱ
Փարոսի մը պատմութիւնը	36
Ճէսիգայի առաջին աղօթքը	36
Նկարագրութիւն դարձին Շլուսպախ անուն անհաւատ Գերմանացւոյն	29
Երկու որբոց պատմութիւնը	24
Երկու գառնուկներուն պատմութիւնը	24
Թէ ինչ յարաբերութիւն կայ Տէրունա- կան ընթրեաց եւ եկեղեցւոյ բար- ւոք վիճակին մէջտեղ	16
Իւր խօսքին հաւատարիմ մարդ	11
Մահը դիմաւորել յուսով կամ երկիւ- ղիւ	10
Մօր մը խօսքերը	8
Գրովտիոս եւ անոր խոստովանութիւնը մահուան ժամանակ	8
Օրհնեալ մատեանը	7
Առաջադրութիւնք քրիստոնեայ առն	7
Մօր մը զիտաւորութիւնը եւ որոշումը որդւոց կրթութեան համար	7



2013

